Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՄՈՒԹԱՖՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (11 հոկտեմբեր 1992 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Որպէս առաքեաց զիս Հայր և ես առաքեմ զձեզ, գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, ուսուցէք զնոսա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի» (Մատթեոս ԻԸ. 19):

Սիրելի և հավատացյալ ժողովուրդ, Աստված չի կամենար, որ մեղավորը մահանա, այլ կփափագի, որ մարդը դառնա իր չար ճանապարհեն և ապրի: Աստված այնքան սիրեց մեղավորներս, անքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Էութենեն՝ իր Միածին Որդին ղրկեց, որպեսզի բոլոր անոնք, որոնք հավատան Անոր, հավիտենական կյանք ընդունին: Աստված մեզ փրկելու, հավիտենական կյանքին առաջնորդելու համար ամեն բանե առաջ ընտրեց լուսավորության ճամփան: Միածին Որդին՝ մեր Տերը Յիսուս Քրիստոս, մարմնացավ, մարդացավ, ծնավ կատարելապես Սուրբ Կույս Մարիամեն, ինչպես Սիմեոն Ծերունին ըսավ, «որպէս լոյս ի յայտնութիւն հեթանոսաց» (Ղուկաս Բ. 32):

Մեր Եկեղեցին առաքելական և ուղղափառ հայրերու հետ կդավանի, որ Միածին Որդին Աստված էր Աստուծմե, լույս էր լուսե, ճշմարիտ Աստված էր ճշմարիտ Աստուծմե. ուրեմն ո՞վ կարող է Իրմե շատ ավելի հստակ կերպով, շատ ավելի կատարյալ կերպով ծանոթացնել մեզ Երկնավոր Հայրը: Ահավասիկ, Տեր Հիսուս երկրավոր Իր կյանքի ընթացքին, և մանավանդ վերջին երեք տարիները, Իր աշակերտներուն և բազմահազար ժողովրդին՝ հրաշքներու կողքին, բժշկություններու և, զարմանահրաշ ուրիշ նշաններու կողքին շարունակ ավետարանեց, Բարի Լուրը տվավ, թե ո՛րպես ելք կա մեր այս ծանր վիճակեն, թե ո՛րպես կարելի է Աստուծո երջանկությունը, Աստուծոո տված հոգևոր ուրախությունը, Աստուծո փրկությունը վայելել: Տերը Իր երկրավոր տարիներուն շարունակ լույս սփռեց, Վերջին Ընթրիքին Վերնատան մեջ Իր աշակերտներուն հետ նստած հաղորդեց իրենց Սուրբ Պատարագի խորհուրդը, ոչ միայն ուզեց, որ Իր բարոյական և կամ խորհրդավոր ներկայությամբ հաղորդվինք Իր ֆիզիկական բացակայության, այլ ուզեց, որ աշակերտները երբ հավաքվին, նաև հիշատակեն Իր ըրածները: Ուրեմն աշակերտներուն ոչ միայն հաղորդվեցավ ավանդությունը, այլ միաժամանակ հրամայվեցավ կատարել Տիրոջ ըսածն ու ըրածը: «Ինչպես որ Հայրը զիս ղրկեց լուսավորելու՝ այսինքն փրկության ավետիսը հաղորդելու ձեզ, հիմա Ես ձեզ կղրկեմ. գացեք ուրեմն և ավետարանեցեք

բոլոր ազգերուն, նույնը դուք սորվեցուցեք ամենքին և ես ձեզ հետ պիտի ըլլամ մինչև աշխարհի վերջը»:

Սուրբ Հոգին իջավ և զորացուց աշակերտները, ամենքն ալ Սուրբ Հոգու ներգործության կրակովը վառված՝ ելան սուրբ քաղաքեն, գացին մինչև Պարսկաստան, Հայաստան, Հնդկաստան և ամենուրեք տարին Հիսուսի լույսը՝ վայելելու թե՛ երկնավոր և թե՛ երկրավոր ուրախությունը: Տերը սորվեցուց բազում օրինակներով Ավետարանին մեջ, որ չկա շնորհք Աստուծմե տրված, որ միայն մեզի համար ըլլա: Ամեն շնորհք նաև ուրիշներուն բաշխվելու համար է:

Սիրելի հավատացյալներ, Տերը անպտուղ թզենիի օրինակով սորվեցուց, որ ծառը եթե պտուղ չտա, պետք է կտրվի, պետք է կրակ նետվի: Այդ նույն օրինակը մեզի համար է նաև: Տիրոջ լույսը ափոելու հրամայականով մենք, որ այսօր Աստուծո Սուրբ Խոսքը լսեցինք, պատգամ ստացանք Աստուծմե մեր տրվածները ուրիշներուն պատմելու անհրաժեշտության մասին, որպեսզի ուրիշներն ալ հաղորդ դառնան Աստուծո խոսքին: Դուք ձեզի հարցուցեք, սիրելի ժողովուրդ, օրվա ընթացքին արդյոք քանի՞ վայրկյան կխոսիք Աստուծո մասին, սուրբերու կյանքին մասին, Եկեղեցիին մասին: Մեզի տրված ամեն ինչ ուրիշներուն բաժնելու համար է, մանավանդ սերը, որ կբաժնե և չի հատնիր: Աստուծո սերն է, որ կրակի պես կտարածվի: Որքան տաք, այդքան կշատանա: Այդպես է նաև Աստուծո խոսքը. որքան Տիրոջ տված շնորհքները՝ Տիրոջ խոսքը ուրիշներուն բաժնեք, այնքան պիտի շատանա և տարածվի ան մեր հայրենիքում: Ուսուցանելը Եկեղեցիին հիմնական պարտականություններեն մեկն է: Եկեղեցին նաև դուք եք: Աստուծո խոսքը տարածելը ինչքան եպիսկոպոսի, վարդապետի, քահանայի, այնքան նաև ձե՛ր պարտականությունն է:

Սիրելի հավատացյալներ, Քրիստոսի ուսուցանելու այդ հրահանգը էական է Եկեղեցիին համար, մեզ և ձեզ համար, որովհետև ուր որ ուսուցում չկա, կույր հավատք կա, ուր որ ուսուցում չկա, ձևական հավատք կա: Շատ դյուրին է ծունկի բերել կույր հավատքը, շատ հեշտ է ծունկի բերել և պարտության մատնել ձևական հավատքն ու կեղծավորությունը: Ձևականությունն ու կեղծավորությունը քրիստոնեության համար ամենամեծ ախտերն են, և բուժելու միակ ճամփան կարծես թե Տիրոջ կողմե մեզի արդեն ցույց տրված է՝ հալածանքն ու տառապանքն է այդ: Եկեղեցվո հայրապետները մեկ կողմեն կուսուցանեին, մյուս կողմեն կհալածվեին: Առաքյալներեն ոչ մեկը հանգիստ քարոզության շրջան բոլորեց, բացի մեկեն, ամենքն ալ հալածվեցան, ամենքն ալ նահատակվեցան: Նույնիսկ մեր թարգմանիչ վարդապետները հալածվեցան և դժվարություններու մատնվելով հանդերձ, Սուրբ Հոգվո ներգործությամբ, հրաշքի համազոր իրագործություններու հեղինակները դարձան:

Սիրելի հավատացյալներ, այսօր Հայաստանի մեջ երբ տնտեսական, քաղաքական, ընկերային տագնապ կապրինք, ստիպված ենք զգուշանալ օտարոտի նոր շարժումներեն. կաթոլիկներ, բողոքականներ, աղանդավորական շարժումներ կուգան և կփորձեն քանի մը հարյուր դոլլարի ծախու առնել հայու հոգին:

Սիրելի հավատացյալներ, մենք երբ կընդվզինք և վրդովմունք կարտահայտենք այս եղելությանց առջև, երբեք պիտի չհուսահատինք և պիտի չընսենք, որ Հայաստանյայց Եկեղեցին այսօր ուժը չունի դիմագրավելու, դիմադրելու և քարոզչությամբ իր ժողովրդին վարդապետելու և զայն գիտակից

դարձնելու միմիայն իր հայու հավատքին և զինք մայրենի Եկեղեցիի շուրջը հավաքելու՝ մեր ներկա պայմանները որքան ալ դժվար և ծգնաժամային ըլլան: Մենք ալ այսօր, մեր հոգևոր դասով և ձեզմով, սիրելի ժողովուրդ, կրնանք այս բոլոր օտար շարժումները չորցնել, բոլոր այս օտար շարժումներու առաջքն առնել մեր հողերու վրա, կրնանք մեր Եկեղեցիին ձայնը Հայաստանի ամենեն մութ և հեռավոր անկյուններուն տանիլ: Ասոր համար եկեղեցական և աշխարհական ձեռք-ձեռքի պիտի տանք, պիտի լեցվինք Տիրոջ Հոգիով և պիտի անսանք Անոր հրամայականին. «ուսուցեք ամեն ինչ, որ ես ձեզ սորվեցուցի». մարդ իրեն պիտի չպահե սորվածը, այլ պիտի տարածե, որպեսզի բոլորը վերադառնան առաքելական և ուղղափառ եկեղեցվո գոգը:

Սիրելի հավատացյալներ, աղոթենք և մաղթենք, որ Տիրոջ շնորհները առատապես թող տեղան մեր վրա և Սուրբ Հոգին ներգործե ընդմիշտ մեր Եկեղեցիին մեջ: Տարեք այս օրհնությունը ձեր բույներուն: Այն լույսը, որ հնթանոսներուն համար ղրկվեցավ, իջավ նաև այստեղ և Հայաստանը լուսավորվեցավ:

Տիրոջ օրհնությունը և սրբարար զորությունը անպակաս ըլլա ամենքիս վրայեն. այժմ և հավիտյանս. ամեն: